ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ
7 մայիսի 2026 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 6-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 4-ՐԴ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 52 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին Երևանի քաղաքապետի տեղակալներ՝ Սուրեն Գրիգորյանը և Ս.Մադաթյանը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Վիլեն Արևշատյանը, քաղաքապետի խորհրդականներ՝ Կամո Արեյանը, Արփենիկ Մուրադյանը, Սոնա Թևանյանը, քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արմինե Ստեփանյանը, կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը, անշարժ գույքի կառավարման վարչության պետ Վահան Խաչատրյանը, բնապահպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Սիրարփի Հայկազյանը, լրատվության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Օֆելյա Սիմոնյանը, ֆինանսական վարչության պետ Քրիստինե Ավետիսյանը, մշակույթի և տուրիզմի վարչության պետի տեղակալ Հայկ Մկրտչյանը, ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ Նարեկ Բարսեղյանը, տրանսպորտի վարչության պետի պարտականությունները կատարող Հայկ Էվոյանը, շինարարության և բարեկարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Անդրանիկ Թևոսյանը, կոմունալ տնտեսության վարչության պետի տեղակալ Գրիգոր Ոստանիկյանը, Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Պետրոս Պետոյանը և Երևանի քաղաքապետի մամուլի քարտուղար Արտյոմ Կարապետյանը:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասով՝ Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը առաջարկեց, որ Երևանի ավագանու 6-րդ նստաշրջանի հերթական նիստը գումարել 2026 թվականի հունիսի 23-ին, ժամը 10.00-ին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 52, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Առաջարկն ընդունվեց միաձայն:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ Երևանի ավագանու 2026 թվականի մայիսի 7-ի նիստի օրակարգի նախագծից հանում է չզեկուցվող 5-րդ՝ «Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին» հարցը:

Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար Արամ Թորոսյանն առաջարկեց զեկուցվող 24-րդ՝ «Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին» հարցը զեկուցելիս պարզաբանում ներկայացնել նաև չզեկուցվող 16-րդ՝ «Վճարման պարտականությունից ազատելու մասին» հարցի վերաբերյալ:

Ներկայացված վերոնշյալ առաջարկությունն ընդունվեց:

Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանն առաջարկեց օրակարգի նախագծի չզեկուցվող 15-րդ՝ «Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Արշակունյաց պողոտա հ.25/4 հողամաս հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին» հարցը քննարկել զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան:

Քվեարկություն.

Կողմ՝ 26, դեմ՝ 26, ձեռնպահ՝ 4

Առաջարկը չընդունվեց:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ Երևանի ավագանու 2026 թվականի մայիսի 7-ի հերթական նիստի օրակարգի նախագծում ընդգրկված է 23 հարց, որից՝ 2-ից 21-րդ հարցերը չզեկուցվող են.

1. Երևանի ավագանու 6-րդ նստաշրջանի 4-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N482-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին: (Չզեկուցվող)
3. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)
4. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)
5. Կոստան Զարյանի դիմաքանդակի տեղադրմանը համաձայնություն տալու մասին: (Չզեկուցվող)
6. Աշոտ Հարությունյանի կոնցեպտուալ քանդակների տեղադրմանը համաձայնություն տալու մասին: (Չզեկուցվող)
7. Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին: (Չզեկուցվող)
8. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Քըրք Քըրքորյանի փողոց հ.33 հասցեում մանկապարտեզի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
9. Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Մալխասյանց փողոց 1-ին նրբանցք 1 բնակելի տուն, 1/1 բնակելի տուն և 3 հասցեներում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)

10. Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Գ. Հովսեփյան փողոց հ. 66 և 26/7 հողամաս հասցեներում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
11. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Քըրք Քըրքորյանի փողոց հ.23/20 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանն անհամաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
12. Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի 2-րդ թաղամաս հ. 7/1 հասցեում մանկապարտեզի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
13. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Գ. Լուսավորչի փողոց հ.13/1 հասցեում բազմաֆունկցիոնալ հասարակական շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
14. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Արշակունյաց պողոտա հ.25/4 հողամաս հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
15. Վճարման պարտականությունից ազատելու մասին: (Չզեկուցվող)
16. Գույքի անհատույց օգտագործման պայմանագրերում փոփոխություն կատարելու մասին: (Չզեկուցվող)
17. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի հունիսի 17-ի N 106-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: (Չզեկուցվող)
18. Երևան քաղաքում Գրիգոր Խանջյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին: (Չզեկուցվող)
19. Երևան քաղաքում Հենրիկ Սիրավյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին: (Չզեկուցվող)
20. Երևան քաղաքում Համլետ Թամազյան անվամբ փողոց անվանակոչելու մասին: (Չզեկուցվող)
21. Երևան քաղաքում Էդուարդ Աբաջյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին: (Չզեկուցվող)
22. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 483-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)
23. Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին: (Զեկուցվող)

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտարարեց, որ քվեարկության է դրվում Երևանի ավագանու 2026 թվականի մայիսի 7-ի հերթական նիստի օրակարգի նախագիծը.

1. ԼՍԵՑԻՆ – Երևանի ավագանու 6-րդ նստաշրջանի 4-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 33, դեմ՝ 19, ձեռնպահ՝ 4

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 18.06.2009թ. Ն 1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 5-րդ ենթակետը՝ առաջնահերթ քվեարկության են դրվում օրակարգում ընդգրկված չզեկուցվող՝ 2-ից 21-րդ հարցերը:

2. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N482-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան համայնքում 2026 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» N 482-Ն որոշման 1-ին կետի 9-րդ ենթակետից հետո լրացնել նոր 9.1-ին ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«9.1) Երևանի վարչական տարածքում գտնվող հողամասերի նպատակային և (կամ) գործառնական նշանակության փոփոխության դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար 2026 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ, եթե նախատեսվում է հողամասի՝ Երևան քաղաքի գլխավոր հատակագծով սահմանված նպատակային և (կամ) գործառնական նշանակությունները համապատասխանեցնել սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականով ամրագրված նպատակային և (կամ) գործառնական նշանակություններին»:

3. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N41-Ա որոշման N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Շինարարության և բարեկարգման վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

	Շինարարության և բարեկարգման վարչություն			
1	վարչության պետ	1	697,000	697,000
2	վարչության պետի տեղակալ	2	561,000	1,122,000
3	գործավար	1	248,200	248,200
-	**Շինարարական ծրագրերի կառավարման բաժին**			
4	բաժնի պետ	1	408,000	408,000
5	գլխավոր մասնագետ	3	289,000	867,000
6	առաջատար մասնագետ	3	282,200	846,600
-	**Շինարարական աշխատանքների պայմանագրերի կառավարման և վերլուծությունների բաժին**			
7	բաժնի պետ	1	408,000	408,000
8	գլխավոր մասնագետ	2	289,000	578,000
9	առաջատար մասնագետ	2	282,200	564,400
10	առաջին կարգի մասնագետ	1	272,000	272,000
-	**Ճանապարհների շահագործման և սպասարկման բաժին**			
11	բաժնի պետ	1	408,000	408,000
12	գլխավոր մասնագետ	2	289,000	578,000
13	առաջատար մասնագետ	1	282,200	282,200
14	առաջին կարգի մասնագետ	1	272,000	272,000
-	**Շինարարական օբյեկտների ծրագիր**			
15	ծրագրի ղեկավար	1	474,000	474,000
16	պատասխանատու ինժեներ	9	408,000	3,672,000
-	**Ճանապարհների միջին նորոգման և հիմնանորոգման ծրագիր**			
17	ծրագրի ղեկավար	1	474,000	474,000
18	պատասխանատու ինժեներ	10	408,000	4,080,000
-	**Շինարարական ծրագրերի մոնիտորինգի և վերլուծությունների խումբ**			
19	ծրագրի ղեկավար	1	474,000	474,000
20	մասնագետ	3	408,000	1,224,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**47.0**		**17,949,400**

»,

2) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «ԱՄԲՈՂՋԸ՝ Երևանի քաղաքապետարան»» տողում «812.0» և «274,695,145» թվերը փոխարինել համապատասխանաբար «816.0» և «276,240,145» թվերով,

3) «ԱՄԲՈՂՋԸ» տողում «2,470.0» և «732,449,745» թվերը փոխարինել համապատասխանաբար «2,474.0» և «733,994,745» թվերով:

2. Սույն որոշումը համայնքային ծառայության հաստիքների մասով ուժի մեջ է մտնում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

4. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N41-Ա որոշման N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Երեխաների և սոցիալական պաշտպանության վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

	Երեխաների և սոցիալական պաշտպանության վարչություն			
1	վարչության պետ	1	697,000	697,000
2	վարչության պետի տեղակալ	1	561,000	561,000
-	**Երեխաների պաշտպանության բաժին**			
3	բաժնի պետ	1	408,000	408,000
4	գլխավոր մասնագետ - սոցիալական աշխատող	1	289,000	289,000
5	գլխավոր մասնագետ - իրավաբան	1	289,000	289,000
6	գլխավոր մասնագետ - հոգեբան	1	289,000	289,000
7	առաջատար մասնագետ - սոցիալական աշխատող	1	282,200	282,200
8	առաջատար մասնագետ	2	282,200	564,400
9	առաջին կարգի մասնագետ	3	272,000	816,000
-	**Սոցիալական պաշտպանության բաժին**			
10	բաժնի պետ	1	408,000	408,000

11	գլխավոր մասնագետ - սոցիալական աշխատող	1	289,000	289,000
12	գլխավոր մասնագետ - իրավաբան	1	289,000	289,000
13	գլխավոր մասնագետ - հոգեբան	1	289,000	289,000
14	առաջատար մասնագետ	2	282,200	564,400
15	առաջատար մասնագետ - սոցիալական աշխատող	1	282,200	282,200
16	առաջին կարգի մասնագետ	3	272,000	816,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**22.0**		**7,133,200**

»,

2) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «ԱՄԲՈՂՋԸ՝ Երևանի քաղաքապետարան»» տողում «816.0» և «276,240,145» թվերը փոխարինել համապատասխանաբար «821.0» և «277,610,345» թվերով,

3) «ԱՄԲՈՂՋԸ» տողում «2,474.0» և «733,994,745» թվերը փոխարինել համապատասխանաբար «2,479.0» և «735,364,945» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

5. Կոստան Զարյանի դիմաքանդակի տեղադրմանը համաձայնություն տալու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Տալ համաձայնություն հայ անվանի գրող ու մտավորական Կոստան Զարյանի 140-ամյակի առթիվ դիմաքանդակի տեղադրմանը Երևան քաղաքի Աբովյան փողոցի և Սայաթ-Նովայի պողոտայի խաչմերուկում՝ «Վանեցի աղջիկ»-ը քանդակից 15 մետր դեպի վերև ընկած հատվածում՝ համաձայն հավելվածի:

6. Աշոտ Հարությունյանի կոնցեպտուալ քանդակների տեղադրմանը համաձայնություն տալու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Տալ համաձայնություն հայ ժամանակակից քանդակագործ Աշոտ Հարությունյանի կոնցեպտուալ քանդակների տեղադրմանը Երևան քաղաքի Միսաք Մանուշյանի անվան պուրակում՝ համաձայն հավելվածի:

7. Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Քանդակագործ Մասիմո Լիպպիից որպես նվիրատվություն ընդունել «Խաղաղության սեղան» մարմարե քանդակը:

2.Տալ համաձայնություն քանդակագործ Մասիմո Լիպպիի «Խաղաղության սեղան» մարմարե քանդակը Երևանի Անգլիական այգում տեղադրելուն՝ համաձայն հավելվածի:

8. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Քըրք Քըրքորյանի փողոց հ.33 հասցեում մանկապարտեզի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. «ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Քըրք Քըրքորյանի փողոց հ.33 հասցեում մանկապարտեզի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին

9. Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Մալխասյանց փողոց 1-ին նրբանցք 1 բնակելի տուն, 1/1 բնակելի տուն և 3 հասցեներում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. «ԱՐՄ ԿՈՆՍՏՐԱԿՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Մալխասյանց փողոց 1-ին նրբանցք 1 բնակելի տուն, 1/1 բնակելի տուն և 3 հասցեներում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

10. Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Գ.Հովսեփյան փողոց հ.66 և 26/7 հողամաս հասցեներում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. «ԳԼՈԲԱԼ ՊՐՈԵԿՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Գ. Հովսեփյան փողոց հ. 66 և 26/7 հողամաս հասցեներում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

11. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Քըրք Քըրքորյանի փողոց հ.23/20 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանն անհամաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. «ՍՈԼԱ ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Քըրք Քըրքորյանի փողոց հ.23/20 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել անհամաձայնություն, հետևյալ պատճառաբանությամբ.

1) Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի N 04-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերի» (այսուհետ՝ Նորմեր) 241-րդ կետի համաձայն՝ տարբեր նշանակության կանաչապատ տարածքների տեսակարար կշիռը բնակավայրի ընդհանուր տարածքի նկատմամբ պետք է լինի 40%-ից ոչ պակաս, իսկ բնակելի (բնակեցման) տարածքի սահմաններում՝ 25%-ից ոչ պակաս: Նախաձեռնողի կողմից ներկայացված էսքիզային նախագծի համաձայն կանաչապատ տարածքի մակերեսում (3055 մ^2) ներառվել են նաև կառույցների տանիքային հատվածներում ցուցադրված կանաչ մակերեսները, որի պատճառով կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին (6590 մ^2) կազմում է 40 տոկոսից պակաս, այսինքն տվյալ նախատեսվող գործունեության դեպքում չի պահպանվում Նորմերով սահմանված պահանջը:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

12. Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի 2-րդ թաղամաս հ.7/1 հասցեում մանկապարտեզի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. «ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի 2-րդ թաղամաս հ. 7/1 հասցեում մանկապարտեզի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

13. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Գ. Լուսավորչի փողոց հ.13/1 հասցեում բազմաֆունկցիոնալ հասարակական շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. «ՄԲՑ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Գ. Լուսավորչի փողոց հ.13/1 հասցեում բազմաֆունկցիոնալ հասարակական շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

14. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Արշակունյաց պողոտա հ.25/4 հողամաս հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. «ՌԵՏԻՆ 2» փակ բաժնետիրական ընկերության կողմից Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Արշակունյաց պողոտա հ.25/4 հողամաս հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

15. Վճարման պարտականությունից ազատելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. «Կոֆֆենետ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն ազատել Երևան քաղաքի վարչական տարածքի Նալբանդյան 23/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 105քմ, Նալբանդյան 23/2 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 165քմ և Իսահակյան 7 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 1552.07քմ հողամասերի վարձակալության իրավունքի տրամադրման պայմանագրերով սահմանված և սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահին և մինչև վարձակալության պայմանագրերի դադարումը չվճարված վարձակալության վճարների և դրանք պայմանագրերով սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով հաշվարկված և չվճարված տույժերի վճարման պարտականությունից:

2. «Արարշին գրուպ» սահմանափակ պատասխամատվությամբ ընկերությանն ազատել Երևան քաղաքի վարչական տարածքի Իսահակյան 3/3 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 480.86քմ, Իսահակյան 3/4 հասցեում

գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 135.9քմ և Իսահակյան 3/5 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 49.37քմ հողամասերի վարձակալության իրավունքի տրամադրման պայմանագրերով սահմանված և սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահին և մինչև վարձակալության պայմանագրերի դադարումը չվճարված վարձակալության վճարների և դրանք պայմանագրերով սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով հաշվարկված և չվճարված տույժերի վճարման պարտականությունից:

16. Գույքի անհատույց օգտագործման պայմանագրերում փոփոխություն կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Նալբանդյան փողոցի հ.50 շենքի հ.հ.180 և 181 հասցեներում գտնվող, Երևան համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 15.08.2002թ. հ.հ.504306 և 504310 վկայականներ) 464.0քմ և 257.0քմ մակերեսով տարածքների համար «Վլադիմիր Ենգիբարյանի անվան բռնցքամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ի հետ 03.05.2021թ. կնքված անհատույց օգտագործման հ.հ.1572 և 1574 պայմանագրերի գործողության ժամկետները սահմանել մինչև 2031 թվականի մայիսի 1-ը:

2. Երևանի քաղաքապետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված անհատույց օգտագործման պայմանագրերում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրերի կնքման գործընթացը:

17. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի հունիսի 17-ի N 106-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի հունիսի 17-ի «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N106-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

18. Երևան քաղաքում Գրիգոր Խանջյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Դավթաշենի 9-րդ փողոցն (զուգահեռ է Ազատ Շերենցի փողոցին, հասնում է Դավթաշենի կամրջի տարածք) անվանակոչել գեղանկարիչ, ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ Գրիգոր Խանջյանի անվամբ՝ «Գրիգոր Խանջյան փողոց»:

19. Երևան քաղաքում Հենրիկ Սիրավյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Դավթաշենի 4-րդ փողոցն (սկսվում է Դավթաշենի 4-րդ փողոցի հ.1 հասցեի հարակից տարածքից, հատելով Դավթաշենի 1-ին, Պարիս Հերունու և Անդրանիկ Իոսիֆյան փողոցները, հասնում Եղվարդի խճուղի) անվանակոչել ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ Հենրիկ Սիրավյանի անվամբ՝ «Հենրիկ Սիրավյան փողոց»:

20. Երևան քաղաքում Համլետ Թամազյան անվամբ փողոց անվանակոչելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Կարապետ Ուլնեցու փողոցից սկսվող և գերեզմանատան հարակից տարածքով մինչև Էզրաս Հասրաթյան փողոց հասնող ճանապարհահատվածն անվանակոչել վիրաբույժ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համլետ Թամազյանի անվամբ՝ «Համլետ Թամազյան փողոց»:

21. Երևան քաղաքում Էդուարդ Աբաջյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Նոր Արեշի 4-րդ փողոցն (սկսվում է Նոր Արեշի 3-րդ փողոցից, հատելով 5-րդ, 11-րդ և Էրեբունու փողոցները, ընդհատվում է, ապա Նոր Արեշի 15-րդ փողոցից շարունակվում, հասնում 17-րդ փողոց) անվանակոչել նկարիչ Էդուարդ Աբաջյանի անվամբ՝ «Էդուարդ Աբաջյան փողոց»:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 32, դեմ՝ 12, ձեռնպահ՝ 2

Որոշումներն ընդունվել են ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ այժմ քննարկման է ներկայացվում 2026 թվականի մայիսի 7-ի հերթական նիստի զեկուցվող հարցերը.

22. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 483-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N483-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ տրվել է դրական եզրակացություն:

ԶԵԿՈՒՑԵՑ–Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Քրիստինե Ավետիսյանը:

«Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 483-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Տ. Ավինյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

1. Արման Բաբաջանյան- Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ,
2. Մեսրոպ Մանուկյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ,
3. Տիգրան Պետրոսյան – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ,
4. Սուսաննա Մելիքյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ:

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը, քաղաքապետի խորհրդական Կամո Արեյանը և քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Քրիստինե Ավետիսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել է ավագանու 5 անդամ.

1. Մեսրոպ Մանուկյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ,
2. Սարգիս Տեր-Եսայան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ,
3. Արամ Թորոսյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար,
4. Նատալյա Սինորյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ,
5. Մանուկ Սուքիասյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար:

Արտահերթ ելույթներով հանդես եկան «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանը, «Հանրապետություն» խմբակցության ղեկավար Անի Խաչատրյանը, «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանը և «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար Արամ Թորոսյանը:

Ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

Հայտարարվեց 15 րոպե ընդմիջում:

Նիստը վերսկսվեց ժամը 11.37-ին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 483-Ն որոշման NN 1, 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1-5 հավելվածների:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 46, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 15

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

23. Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին» նախագծի վերաբերյալ տրվել է դրական եզրակացություն:

ԶԵԿՈՒՑԵՑ–Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Պետրոս Պետոյանը:

Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Պետրոս Պետոյանը պարզաբանումներ ներկայացրեց նաև օրակարգի նախագծի չզեկուցվող 15-րդ՝ «Վճարման պարտականությունից ազատելու մասին» հարցի վերաբերյալ:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 10 անդամ.

1. Հայկ Գրիգորյան – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ,
2. Իզաբելլա Աբգարյան – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ,
3. Տիգրան Պետրոսյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ,
4. Մեսրոպ Մանուկյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ,
5. Պեդրո Զարոկյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ,
6. Արման Բաբաջանյան-Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ,
7. Ռոբերտ Ծովյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ,
8. Իոսիֆ Կուբատյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ,
9. Արամ Թորոսյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար,
10. Աննա Ավետիսյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ:

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը, Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Պետրոս Պետոյանը, քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արմինե Ստեփանյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել է ավագանու 3 անդամ.

1. Արշակ Սարգսյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ,
2. Արամ Թորոսյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար,

3. Պեդրո Զարոկյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Կոֆֆենետ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից որպես նվիրատվություն ընդունել ք. Երևան, Կենտրոն, Իսահակյան փողոց 7, ինչպես նաև Նալբանդյան փողոց 23/1 հասցեներում գտնվող Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա կառուցված և սեփականության իրավունքով ընկերությանը պատկանող անշարժ գույքերը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. «Արարշին գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից որպես նվիրատվություն ընդունել ք. Երևան, Կենտրոն, Իսահակյան փողոց 3/3, Իսահակյան փողոց 3/4 և Իսահակյան փողոց 3/5 հասցեներում գտնվող Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա կառուցված և սեփականության իրավունքով ընկերությանը պատկանող անշարժ գույքերը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշման կատարումը՝ Ընկերությունների հետ կնքելով սույն որոշումից բխող նվիրատվության պայմանագրերը:

4. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին և 2-րդ կետերով նախատեսված անշարժ գույքերի (այսուհետ՝ Գույք) նկատմամբ Երևան համայնքի սեփականության իրավունքը գրանցելուց հետո իրականացնել Գույքերի տնօրինմանն ուղղված ցանկացած գործողություն (այդ թվում՝ քանդել (ապամոնտաժել) դրանք):

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 47, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 10

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Կազմեց
Ն. Ղուկասյանը